«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա *՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում*

Հաստատություն *՝ Հ. 158 մսուր-մանկապարտեզ*

Դաստիարակ *՝Լիլիթ Մարտիրոսյան*

Ղեկավար *՝Ժաննա Ավետիսյան*

2023

Բովանդակություն

1. *Ներածություն*……3
2. *Բուն թեմա*……4
3. *Պարապմունքի պլան*……6
4. *Եզրակացություն*……14
5. *Գրականության ցանկ*……15

Ներածություն

Ինտեգրված պարապմունքները զարգացնում են հենց իրենց՝ երեխաների ներուժը, խրա-խուսում են շրջապատող իրականության ակտիվ իմացությունը, պատճառահետևանքնային հարաբերությունների ըմբռնումն ու հայտնաբերումը, տրամաբանության, մտածողության և հաղորդակցման հմտությունները: Ինտեգրված պարապմունքների անցկացման ձևը ոչ ստանդարտ է , հետաքրքիր:

Ինտեգրված պարապմունքները բացահայտում են զգալի մանկավարժական հնարա-վորություններ, թեթևացնում են երեխայի գերլարվածությունը՝ անցնելով տարբեր գործունեության էապես մեծացնում են ճանաչողական հետաքրքրությունը , ծառայում են երևակայության , ուշադրության, մտածողության , խոսքի և հիշողության զարգամանը:

Ինտեգրումը ժամանակակից հասարակության մեջ բացատրում է կրթության մեջ ինտեգրման անհրաժեշտությունը:

Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Նախադպրոցական կրթության կարևոր խնդիրներից է ուսումնառությունը թեմատիկ պարապմունքների միջոցով կազմակերպելը: Թեմատիկ պարապունքները կարևորում են գործունեության այն ձևերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն նախաձեռնություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Թեմատիկ ուսուցումն ապահովում է երեխայի զարգացման մտավոր, սոցիալիստական , հուզական , ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը և չի կենտրոնանում մեկ՝ առանձնացված ոլորտի վրա: Այն ենթադրում է ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միավորում ՝ մեկ հետաքրքիր գաղափար ուսումնարելու միջոցով , որի մեջ ամփոփված են տարբեր առարկաներից բովանդակային միավորներ:

Մանկավարժական պրակտիկան ցույց է տվել, որ թեմատիկ պլանավորման սկզբունքի կիրառման դեպքում հնարավորություն է ընձեռվում էականորեն կրճատել պարապմունքների, կազմակերպված ուսուցման համար հատկացվող ժամանակը , երեխաների ծանրաբեռնվածու- թյունը , փոխարենը այն տրամադրել կազմակերպվող խաղերին , առողջարարական տարաբնույթ միջոցառումները:

Թեմատիկ պլանավորման ժամանակ մեծ նշանակություն ունի երեխաների հետ տարվող առավոտյան զրույցի կազմակերպումը: Այն մանկավարժական գործունեության կարևորագույն բաղկացուցիչ մասն է , որը նպաստում է երեխաների խոսքի և մտածողության զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Թեմատիկ ուսուցումը հնարավորություն է տալիս դաստիարակին ՝ ծրագիրը կազմա- կերպել երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող թեմաների, խնդիրների կամ կենսական հարցերի շուրջ :

Ինտեգրված մոտեցումը համապատասխանում է նախադպրոցական դիդակտիկայի հիմնական պահանջներից մեկին . կրթությունը պետք է լինի փոքր ծավալով , բայց տարողունակ:

***Ինտեգրված – համատեղել** գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքնե-րով՝ լրացնելով միմյանց / երաժշտության, գրականության, նկարչության ստեղծագործություննե- րի միջոցով այնպիսի հասկացության դիտարկում, ինչպիսին է «տրամադրությանը»/:*

***Ինտեգրված պարապմունքը**–սա գործունեություն է , որն ուղղված է որոշակի թեմայի ամբող- ջական էության բացահայտմանը տարբեր տեսակի գործունեության միջոցով , որոնք համակցված են գործունեության լայն տեղեկատվական դաշտում ՝ փոխադարձ ներթափանման և հարստացման միջոցով:*

Ինտեգրված պարապմունքի նախապատրաստման փուլում, գիտելիքների համակարգային բնույթին համապատասխանելու համար , մանկավարժները օգտագործում են մտավոր գործողությունների քարտեզ:

Անցկացումը դաստիարակից պահանջում է հստակ պատրաստվածություն և երեխաների մոտ համապատասխան թեմայի վերաբերյալ գիտելիքների ու հմտությունների արդեն ձևավորված պաշար: Ուստի ամեն օր նման պարապմունքների անցկացնելը շատ դժվար է:Երեխաների հետ ինտեգրված պարապմունքներ անցկացնելու տարիքային սահմանափակում չկա:Հիմնական բանը խմբասենյակում երեխաների աշխատանքը կազմակերպելու դաստիարակի կարողությունն է,պարապմունքի թեմայի և դրա բովանդակության ճիշտ ընտրությունը:

Պատկերավոր կերպով ինտեգրացիոն սխեման կարելի է պատկերել ծառի տեսքով,որի բունը գեղարվեստական պատկեր է,արմատները `արտահայտչամիջոցներ,իսկ ճյուղերը՝ կրթական տարածքներ:Ինտեգրված դասի անցկացման առանձնահատկությունը հնարավորություն է տալիս թեման բացահայտել հնարավորինս ամբողջական և խորը, չնայած այն հանգամանքին , որ նման գործողությունը շատ ժամանակ չի պահանջում / կարծես դաստիարակը առանձին պարապ- մունք է անցկացնում/: Դրա շնորհիվ նախադպրոցական տարիքի երեխաները ժամանակ են ազատում այլ գործունեության համար. Օրինակ `բացօդյա խաղի համար:

Ինտեգրված կրթական գործունեությունը , բացի նոր նյութի անմիջական ներկայացումից ներառում է երեխայի ակտիվ դիրքորոշումը , քանի որ այն հիմնականում բաղկացած է խաղա- յին տարրերի: Խաղային տարրը ինտեգրված պարապմոնքի անբաժանելի մասն է : Ինտեգրված պարապմունքի հիմնական նպատակները՝ երեխաների կողմից շրջապատող աշխարհի պատկերի ամբողջական ընկալման ցանկությունը. Նախադպրոցականների մոտ տեղեկատվության ինքնուրույն զարգացման և դրա օգտագործման հմտությունների ձևավորում. ստեղծագործական կարողությունների զարգացում, գեղարվեստական ճաշակ:

Ակնհայտ է ,որ ինտեգրված պարապմունքներն ավելի բարդ են քան ավանդական միջոցառումները : Դրանք դաստիարակից պահանջում են որոշակի հմտություն ,լուրջ նախնական աշխատանք և նախադպրոցականների նախապատրաստում նյութի ընկալման համար, հե- տևաբար դրանք շատ հաճախ չեն անկացվում `սովորաբար 1-2 անգամ: Բացի այդ , բացի դաստիարակից այս դասին հաճախ ներգրավված են նաև այլ մասնագետներ, օրինակ `երա-ժշտական ղեկավար կամ ֆիզկուլտուրայի հրահանգիչ:

Ինտեգրված պարապմունքի մոտավոր կառուցվածքը

Ներածական մաս՝ *Դաստիարակը երեխաներին դրդում է գործունեությանը , օրինակ՝ ստեղծում է խնդրահարույց իրավիճակ, որ պետք է լուծվի /ինչ կլինի մեր մոդորակի վրա , եթե ջուրը անհետանա կամ արևը տաքանա/:*

Հիմնական մաս՝ *Երեխաները ստանում են նոր գիտելիքներ , որոնք կօգնեն լուծել խնդրահարույց հարցը օրինակ թե ինչ նշանակություն ունի ջուրը մարդու կյանքում և բնության մեջ բոլոր կենդանի էակների համար:Միևնույն ժամանակ կարևոր է տեսանելիությունը:*

Միաժամանակ աշխատանքներ են տարվում երեխաների համահունչ խոսքի զարգացման ,և նրանց բառապաշարի հարստացան ուղղությամբ:

Վերջնական մաս՝ *Նախադպրոցականները համախմբում են իրենց գիտելիքները գործնական գործունեության գործընթացում/ սա կարող է լինել նկարչություն, մոդելավորում, հավելված/ կամ հետաքրքիր դիդակտիկ խաղ:*

Ինտեգրված պարապմունքների արժեքը՝ *Նախադպրոցականների գիտելիքները ձևավորվում են հմտությունների հետ միասնաբար, երեխաների հորիզոններն ընդլայնվում են, յուրաքանչյուր առարկա կամ երևույթ դիտարկվում է բոլոր կողմերից: Գիտելիքը յուրացնելու նկատմամբ հետաքրքրությունը մեծանում է, երեխաների մոտ թուլանում է լարվածությունը, մեծանում է ինքնավստահությունը:Ավելի մեծ չափով քան ավանդական պարապմունքները , նրանք օգնում են խոսքի զարգացման , վերլուծության, սինթեզի մտավոր գործողությունների ձևավորմանը , համեմատելու և ընդհանրացնելու կարողությանը :*

Թեմատիկ պարապմունքների ժամանակ ես հաշվի եմ առնում հետևյալ հարցերը.

- *Արդյոք , թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին ,*
- *Նպաստում է երեխաների երևակայության և ստեղծագործական մտքի խթանմանը,*
- *Հնարավո՞ր է ընտրված թեման անցնել այնպես , որ ապահովվի երեխաների բազմամակարդակ մասնակցությունը , և միաժամանակ , յուրաքանչյուր երեխայի գործադրած ջանքը պսակվի հաջողությամբ*
- *Երեխաները հնարավորություն կունենա՞ն համագործակցելու և որոշակի պատասխանատվություն կրելու*
- *Կարո՞ղ են նրանք ավելացնել իրենց գիտելիքները և փորձը՝ առարկաների , մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:*

ԿՈՆՍՊԵԿՏ

Երևանի 158 մսուր-մանկապարտեզ ՀՈԱԿ-ի միջին խմբում անցկացվող

Էկոլոգիա+ կերպարվեստ ինտեգրված օրինակելի պարապմունքի:

Տևողությունը 25 րոպե

Դաստիարակ՝ Լ Մարտիրոսյան

Երաժշտ. դաստ.՝ Ա. Գաբրիելյան

Պարուսույց ՝ Ա. Սահակյան

ՏԵՍԱԿ-Էկոլոգիա+կերպարվեստ ինտեգրված պարապմունք

ԹԵՄԱ <<Աշուն>>

ՆՊԱՏԱԿ— Ամրապնդել երեխաների ունեցած գիտելիքները աշնանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին :

Զարգացնել մտածողությունը, խոսքը, մանր մկանային համակարգը գունազգացողությունը, ուշադրությունը,հիշողությունը,ճանաչողական երևակայությունը:

Դաստիարակել բնության նկատմամբ սեր ,հոգատար վերաբերմունք:

Հարստացնել բառապաշարը փչակ ,որջ, գույնզգույն ,պաշար ,տերևա-թափ բառերով:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՐԱԳԱՆԵՐ- փչակով ծառ,արջի որջ, ոզնու բուն,ուրվագծած տերև սոսինձ, մկրատ, պլաստիլին,գունավոր թղթեր,աշնան նկար, միրգ,բանջարեղեն,բնական աշնան տերև:

ԸՆԹԱՑՔ

Լսվում է քամուց շարժվող ծառերի խշշոց
—Երեխաներ այս ինչ ձայն է
Բացատրել ,որ քամուց ճոճվող ծառերի աղմուկն է և ամենաշատ ծառերը աճում են անտառում :
—Այսօր եկեք մենք էլ գնանք անտառ, ինչ՞ գեղեցիկ գույներ կա անտառում:

—Ինչու է անտառը այսքան գույնզգույն
—Տարին քանի եղանակ ունի
—Որոնք են աշնան ամիսները
Առաջարկել նստել և շարունակել զրույցը
—Ինչ փոփոխություններ է կատարվում աշնանը բնության մեջ:
Երեխաները կիսվում են աշնան մասին իրենց ունեցած գիտելիքներով:
—երեխաներ աշունը ամենաառատ ,լի, հարուստ եղանակն է ,այն մեզ պարգևում է համեղ մրգեր,օգտակար բանջարեղեն :
Երեխաների ուշադրությունը հրավիրել մրգերով և բանջարեղենով զամբյուղներին:
—Իսկ ինչ են անում կենդանիները աշնանը:
Երեխաները պատմում են ինչպես են կենդանիները նախապատրաստվում ձմռանը(պաշար հավաքում ,բները տաքացնում)
Երեխաների ուշադրությունը հրավիրել փչակով ծառի վրա և հարցնել
—Ինչ գեղեցիկ ծառ է , ինչ եք կարծում ով է ապրում այս փչակում
—Ինչ է անում սկյուռը աշնանը:
—Ինչ է սիրում ուտել սկյուռը:
—նա ողջ ձմեռ փչակից դուրս չի գալիս,իր պոչով ծածկվում է և չի մրսում:
Ցույց տալ արջի որջը և հարցնել
—Իսկ սա ում որջն է :
—Ինչ է անում արջը աշնանը:
—Ինչ է սիրում ուտել արջը:
—Ինչպես է դիմավորում ձմեռը:
Ցույց տալ ոզնու բունը և հարցնել

—Ի՞նչ սա ում բունն է :
—Ոզնին ի՞նչ է անում աշնանը:
—Ի՞նչ է սիրում ուտել ոզնին:
—Երեխաներ այսքան տերև ինպե՞ս է թափվել անտառում :
—Տերևները երբ թափվում են ,ինչպե՞ս է կոչվում այդ երևույթը:
—Քամին փչում է և տերևները պար բռնելով ցած են իջնում ծառերից:

ՖԻԶ—ԴԱԴԱՐ
—Երեխաներ եկեք մենք էլ դառնանք տերևիկ և քամու հետ պար բռնենք:

Քամին ուժգին փչեց
Ծառի ճյուղերը ճոճեց
Տերևները հանեց վեր
Օդում ուրախ պտտեց
Պտտելով պարեցրեց
Հոգնեց ու ցած իջեցրեց:

երեխաներին է միանում <ՏԵՐԵՎԻԿԸ> ով շատ տխուր է

—Ինչու՞ ես տխուր Տերևիկ :

—ինչպես չտխրեմ , ես մենակ եմ մնացել ,ծաղիկները ,կենդանիները քուն են մտել ,

շատ թռչուններ չվել են տաք երկրներ,ծառերը մերկացել են , ես ուր գնամ , ինչ անեմ,

ոչ ոքի պետք չեմ :

—Տերև մի տխրիր , դու պետք ես ծառերին, երեխաներ ինչու՞ է հարկավոր ծառերին

Երեխաները պատասխանում են ,որ տերևները ծածկում են ծառի արմատները

և պաշտպանում են ցրտից:

— Դու պետք ես միջատներին ,ինչո՞ւ է հարկավոր միջատներին երեխաներ:
Երեխաները պատասխանում են ,որպեսզի միջատները թաքնվեն ու քուն մտնեն
Տերևի տակ:
— Դու պետք ես ձմեռող թռչուններին ,ինչու՞ է հարկավոր երեխաներ :
— Երեխաները պատասխանում են ,որ թռչունները սնվեն տերևի տակ թաքնված միջատներով:
— Դու պետք ես բույսերին ,որպեսզի խոնավ պահես հողը և սնունդ դառնաս
ծառերի ու բույսերի համար:
— Դու պետք ես երեխաներին , ինչու՞ երեխաներ :
Երեխաները պատմում են ,որ սիրում են աշնան գույները և տերևներով պատրաստում են
գեղեցիկ աշխատանքներ:
— Երեխաներ եկեք Տերևիկին ուրախացնենք , գեղեցիկ տերևներ պատրաստենք և նվիրենք ,
որպեսզի ՏԵՐԵՎԻԿԸ միայնակ չմնա:

Առաջարկել երեխաներին նստել սեղանների շուրջ և աշխատել
1-ին սեղանի երեխաներին հանձնարարել կտրել գունավոր տերևներ
2-րդ սեղանի երեխաներին հանձնարարել ուրվագծած տերևները ներկել աշնանային գույներով
3-րդ սեղանի երեխաներին հանձնարարել պլաստիլինով ծածկել ուրվագծած տերևը
4-րդ սեղանի երեխաներին հանձնարել ներկել տերևը և արտատպել թղթի վրա
5-րդ սեղանի երեխաներին հանձնարարել ձեռքի պատռումով ստացած գունավոր Թղթիկն երը փակցնելով ,ստանալ աշնանային տերև

ԱՄՓՈՓՈՒՄ

—Երեխաներ այսօր մենք շրջեցինք աշնանային անտառում, զրուցեցինք աշնանը բնության մեջ տեղի ունեցող փոփոխությունների մասին,վերհիշեցինք, թե ինչպես են կենդանիները նախապատրաստվում ձմռանը, ինչ դեր է խաղում աշնան տերևը բնության մեջ: Դարձանք տերևներ քամու հետ պարեցինք և մեր գեղեցիկ աշխատանքով ուրախացրեցինք «Տերևիկին»:

Եզրակացություն

Նպատակս էր երեխաներին տալ գաղափար աշնանը բնության մեջ կատարվող փոփոխությունների մասին: Ձևավորել գիտելիքներ , թե կենդանիները ինչպես են նախապատրաստվում ձմռանը:

Հասա իմ նպատակին երեխաների մոտ ձևավորվեց բնության և կենդանիների նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք:

Իմ նպատակին հասնելու համար ես անցկացրել եմ թեմատիկ, ինտեգրված պարապմունքներ, որոնք էլ ավելի արդյունավետ են դարձնում ուսուցանվող նյութը:

Եվ ես հասա այն նպատակին , որ նրանք աշխատել ենթախմբերով:

Իմ պարապմունքը ավելի արդյունավետ կլիներ , եթե մենք ունենանք նկարչության սենյակ , մոլբերտներ, պատկերավոր նկարներ և համապատասխան դիդակտիկ նյութեր:

Գրականության ցանկ

1. Մանկապարտեզի միջին խմբի /4-5տարեկանների/Նախա կրթական համալիր ծրագիր/ Հ. Միտոյան , Ժ. Ավետիսյան, Լ. Վերդյան և ուրիշ.;ՀՀԿԳՆ, Կրթ. ազգ. ինստ.,- Եր ., Կրթ. ազգ ինս-տ . 2011
2. Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում / Հ. Միտոյան, Լ.Սմբատյան , Լ. Սարգսյան ; ՀՀ ԿԳՆ : Կրթության ազգային ինստիտուտ.- ԵՐ ., Կրթության ազգային ինստիտուտ 2013
3. Նախաշավիղ ամսագիր
4. Էլեկտրոնային համացանց